«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ «Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը»

Հաստատություն ՝ «Աշտարակ համայնքի թիվ 1 Մանուշակ մանկապարտեզ »ՀՈԱԿ

Դաստիարակ ՝ Կամելյա Մկրտչյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ առաջին 4

Գլուխ երկրորդ.....6

Օրինակելի պարապմունք.....9

Եզրակացություն.....23

Օգտագործված գրականություն.....24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայրենաճանաչողության դաստիարակության հիմքը դրվում են դեռևս վաղ մանկության տարիքում: Նախադպրոցական մանկության շրջանը նպաստում է հայրենասիրական զգացմունքների դաստիարակմանը, քանի որ հենց այդ ժամանակ է ձևավորվում մշակութային և արժեքային կողմնորոշումները, երեխայի անձի հոգևոր և բարոյական հիմքը, նրա հույզերի, զգացմունքների, մտածողության զարգացումը , սոցիալական մեխանիզմները: Սկսվում է հասարակության մեջ հարմարվողականությունը, շրջակա միջավայրում ինքնագիտակցության գործընթացը սկսում է աշխարհը :

Հայրենաճանաչողությունը մի գործընթաց է, որի նպատակը էքսկուրսիաների, ազգային տոների, ծեսերի կազմակերպման, ոտանավորների, պատմվածքների, նկարների միջոցով սաներին հայրենաճանաչ դարձնելն է՝ իր , ընտանիքի , շրջակա միջավայրի , տարածաշրջանի , ազգայինի վերաբերյալ գիտելիքների յուրացումն է , շրջապատող միջավայրի վրա մարդու ներգործող դերը դիտարկելու գիտելիքի յուրացումն է , ազգային և հասարակական արժեքների , իր ժողովրդի մշակույթի , սովորությունների հանդեպ հարգանքի ձևավոումը :

Հայրենաճանաչողության ձևավորումը կոչվում էսաների մոտ ձևավորել հետաքրքրասիրությունը և զարգացնել երևակայությունը , ստիպում մտածել ՝ ով եմ ես , որտողից եմ , որտող եմ ապրում , ինչ է ինձ շրջապատում , ինչպիսինն է իմ անցյալը :

Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը երեխաների ունեցած գիտելիքները կյանքի հետ կապելու , առօրյա կյանքում դրանք կիրառելու , տրամաբանությունը զարգացնելու և ընդհանրապես աշխարհաճանաչողության սահմաններն ընդհարձակելու մեջ է :

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հայրենաճանաչողությունը ենթադրում է մարդու դրական հատկանիշների համալիր ձևավորում և զարգացում : Հայրենաճանաչողության մեջ կարելի է ներառել այն տեսակետներն ու դատողությունները , որոնք սահմանվում են որպես հայրենիքի հանդեպ սիրո վեհ զգացում, որը որը բնորոշվում է բնության , հայրենիքի, տան, ծննդավայրի , մանկության պատկերների հանդեպ սիրո վերացական դրսևորմամբ:

Ըստ փիլիսոփա Քոլարի հայրենասիրության մեջ գլխավորը ժողովուրդն է, նրա սովորույթները, հարգանքը նախնիների և լեզվի հանդեպ , իսկ երկիրը պարզապես տարածք է , որն առանց վերը նշվածի չի կարող ներկայացնել ինչ որ բան ինքն իրենից:

Ուստի դեռ նախադպրոցական տարիքից կարևոր է երեխաներին հայրենաճանաչ դարձնել: Մանկապարտեզում դա հնարավոր է իրագործել նաև պարապմունքների միջոցով:

Պարապմունքն ավելի արդյունավետ է լինում, երբ դաստիարակը (միջին խումբ) հարցում է անցկացնում սաների միջավայրում ՝ ճ՛տում նրանց հակումներն ու հետաքրքրությունները, պարզում, թե ինչ թեմայի շուրջ կցանկայի աշխատել: Այդ հարցումներից մեկի ժամանակառաջադրվել են հետևյալ թեմաները.

<< Իմ հայրենիքը Հայաստանն է >>

<< Զարմանահրաշ Հայաստան >>

<< Իմ քաղաքը Աշտարակն է >> :

Սաների մեծամասնության կարծիքը հաշվի աընելով ընտրեցինք <<Իմ հայրենիքը Հայաստանն է >> թեման :

Նախադպրոցական տարիքի սաների կարողությունների աստիճանական ձևավորման համար կարևոր հարց է թեմայի ընտրությունը: << Թեման պետք է մոտ և հարազատ լինի երեխայի հոգուն , գրում է պրոֆեսոր Ա. Տեր -Գրիգորյանը, ապրումներ առաջացնի , դաստիարակության առումով ազդի երեխայի վրա , նպաստի նրա բարոյական կերպարի ձևավորմանը, աշխարհաճանաչողական և լեզվական գիտելիքների հարստացմանը >> :

<<Իմ հայրենիքը Հայաստանն է >> թեման կնպաստի Հայաստանի մասին գիտելիքների հարստացմանը, ՀՀ խորհրդանիշների ճանաչմանը: Այս ամենը հիմք կծառայի հայրենաճանաչողության գիտելիքների խորացմանը:

- Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների համար

Հայրենասիրության պատմական աղբյուրը դարերով ու հազարամյակներով առանձին պետությունների գոյատևումն է որոշակի վայրում, ինչի արդյունքում ձևավորվում է կապվածություն հայրենի հողին, լեզվին ու ավանդույթներին, այն ներառում է ազգայնականությանը հատուկ մի շարք եզրույթներ: Ազգերի կազմավորման ու ազգային պետությունների ստեղծման պայմաններում հայրենասիրությունը դառնում է հասարակական գիտակցության բաղադրիչ մաս XVIII դարում:

Այլ անձանց վերագրելով հայրենասիրական զգացմունքներ, իսկ որոշ իրադարձությունների տալով հայրենասիրական նրբերանգ՝ բնութագրող անձը դրանով հաճախ տալիս է դրական գնահատական: Այն հակադրելի է ունիվերսալիզմից առաջ եկած **աշխարհաքաղաքացիության** հոսանքին, որը ենթադրում է համամարդկային շահի գերակայում նեղ ազգային կամ էթնիկ շահից[1]:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հայրենասիրության մասին պատկերացումները կապված են հայրենիքի նկատմամբ սիրո հետ, սակայն հայրենասիրության էության վերաբերյալ պատկերացումները տարբեր մարդկանց մոտ տարբեր են: Այդ պատճառով էլ ոմանք իրենց համարում են հայրենասեր, մյուսները՝ ոչ:

Հայրենասիրություն, բարոյական և դիվանագիտական սկզբունք, հասարակական զգացողություն, որի իմաստը սերն է հայրենիքի նկատմամբ և պատրաստություն ստորադրել նրա համար սեփական շահերը։ Հայրենասիրությունը ենթադրում է հպարտություն Հայրենիքի նվաճումների հանդեպ։ Հայրենասիրությունը ենթադրում է ազգային շահերի պաշտպանում, կապվածություն սեփական հողին, սեր դեպի հայրենիքի մշակույթը և սեփական լեզուն:

Հայրենասիրությունն ինչ գեղեցիկ ճառագայթ մըն է վեհ ու անմեղ ճակատի վրա

Պետրոս Դուրյան

Հայրենասիրությունն այնպիսի բուռն կրակ մըն է, որ մարդ մոխիր կդարձնե:

Պետրոս Դուրյան

Հայրենասիրությունը նաև հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակը անմար պահելն է[1]:

Հովհաննես Իսակով

Հայրենասիրությունն ամենախոր զգացմունքներից մեկն է՝ ամրացված դարերով ու հազարամյակներով:

Վլադիմիր Իլյիչ Լենին

Հայրենասիրությունը զգացմունքներից ազնվագույնն է:

Լիխաչև

Ազգի ռազմական հանճարը հայրենասիրությունն է, սերը դեպի հայրենիքը:

Գեորգ Լիխտենբերգ

Եթե պիտի մեռնենք, ապա թող այդ լինի սուրը մեր ձեռքին և կռվի դաշտում: Անարգ կյանքից ավելի՝ ազատ կյանքն է գովելի:

Մուրացան

Չկա ավելի խոր զգացում, քան հայրենասիրությունը:

Պարույր Սևակ

Հայրենասիրության ըմբռնմանն ուղղված մոտեցումների ողջ բազմազանությունը կարելի է պայմանականորեն դասել ուղղությունների՝

Առաջին ուղղություն մեջ կարելի է ներառել այն տեսակետներն ու դատողությունները, որոնք հայրենասիրությունը սահմանում են որպես հայրենիքի հանդեպ սիրո վեհ զգացմունք: Այս ուղղությունը բնորոշվում է բնության, հայրենի տան, ծննդավայրի, մանկության պատկերների հանդեպ սիրո վերացական դրսևորմամբ:

Երկրորդ ուղղություն հիմնվում է հայրենասիրության՝ որպես բարձրագույն, առավել կարևոր ու էական զգացմունքներից մեկի ըմբռնման վրա: Սակայն այստեղ, հուզական կողմի հետ մեկտեղ, ներառվում է նաև գործնական տեսանկյուն. հայրենասիրական զգացմունքի ուժը չի սահմանափակվում հայրենիքի հանդեպ սոսկ

սիրո խորությամբ ու վեհությամբ, այլ մղում է ակտիվ գործողությունների՝ հանուն սեփական հայրենիքի բարօրության:

Երրորդ ուղղություն հայրենասիրությունը դիտարկում է որպես հասարակական երևույթ, որի բովանդակությունն ու բնույթը նշանակալի չափով պայմանավորվում են հասարակության, պետության պատմական զարգացման առանձնահատկություններով, իշխող ընտրախավի քաղաքականությամբ: Խորհրդային հասարակական համակարգի պայմաններում հայրենասիրությունը գաղափարախոսական կարևորագույն հիմքերից մեկն էր, հանդես էր գալիս աճող սերնդի դաստիարակության առանցքային ուղղությունների շարքում:

Չորրորդ ուղղություն բնութագրվում է նրանով, որ հայրենասիրության օբյեկտ է դիտվում պետությունը: Այն անվանում են «պետական հայրենասիրություն»: Հայրենասիրության այդ տարատեսակի ի հայտ գալը պայմանավորված էր պատմական առանձնահատուկ պայմաններով: Այն առաջացավ՝ կապված պետության, վերջինիս ամրապնդման համար պետական իշխանության տարբեր ձևերի ստեղծման ջանքերի համախմբման անհրաժեշտության հետ:

Հինգերերդ ուղղություն բացահայտում է հայրենասիրության էությունը հենց անձի հետ անբաժանելի կապի հետ միասին, որը նրա համար բարձրագույն արժեք է: Տվյալ ուղղությունը կոչվում է նաև անձնային հայրենասիրություն:

Վեցերորդ ուղղություն որպես հայրենասիրության սուբյեկտ շատ հաճախ դիտարկում է անձին: Հայրենասիրությունն ըմբռնվում է որպես անձի հոգևոր զարգացման, ինքնարտահայտման կարևորագույն փուլ: Դա հայրենասիրության բարձր մակարդակ է, քանի որ անձի հոգևոր ինքնադրսևորումը ենթադրում է կարևորագույն կողմերի և որակների մի ամբողջության դրսևորում, որոնք բնութագրվում են իրենց ձևակերպվածության լիարժեքությամբ, ամբողջությամբ, կատարելությամբ: Անձի այդ որակները ենթադրում են կրոնական բովանդակություն, ինչը հնարավորություն է տալիս այդ ուղղությունն անվանել հոգևոր-կրոնական: Հոգևոր-կրոնական հայրենասիրությունն ունի ամենամեծ և ամենահարուստ

ավանդույթը, խոր և հզոր արմատներ:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Առարկա՝ Խոսքի զարգացում

Խումբ՝ Միջին Բ

Թեմա՝ << Իմ հայրենիքը Հայաստանն է >>

Տևողությունը՝ 25-30 րոպե :

Պարապմունքի նպատակը .

- Երեխաներին ծանոթացնել Հայաստանի քարտեզին , ՀՀ զինանշանին, դրոշին, ընդհանրացնել տարվա ընթացքում երեխաների ստացած տեղեկությունները մեր երկրի մասին :
- Դաստիարակել սիրո և հպարտության զգացում :

- Զարգացնել երեխաների խոսքը :
- Զարգացնել խմբային աշխատանքի հմտություններ :
- Աշխատանքն ավարտին հասցնելու կարողություն :

Անհրաժեշտ պարագաներ .

- Հայաստանի Հանրապետության քարտեզ :
- Հայաստանի Հանրապետության խորհրդանիշների պաստառ :
- Մարտիրոս Սարյանի << Հայաստան >> նկարը :
- Գունավոր թղթեր , մատիտ , սոսինձ , մկրատ ,գունավոր մատիտներ , ծեփամածիկ :
- Երեխսների լուսանկարներ :
-

Պարապմունքի ընթացքը `

Հնչում է Հայաստանի Հանրապետության օրհներգը , զուգահեռաբար երգեւմ են նաև երեխաները : Այնուհետև դաստիարակը ցուցադրում է Մարտիրոս Սարյանի << Հայաստան >> նկարը , և երեխաները պատմում են նկարի բովանդակությունը :

Այնուհետև սաների ուշադրութեյունը հրավիրվում է խորհրդանիշների պաստառի վրա :

Դաստիարակ `

- Ի՞նչ եք տեսնում այս պաստառում :
- Իսկ ի՞նչ է խերհրդանշում դրանցից յուրաքանչյուրը :
- Ի՞նչ եք հասկանում Հայաստան ասելով :

Այնուհետև դաստիարակն ընթերցում է Սարմենի «Հայրենիք» բանաստեղծությունը.

« **Հայրենիք** »

Մեր մեծ Հայրենիք ,

Ի՞նչ կա աշխարհում

Քեզնից անառիկ

Ու քեզնից սիրուն :

Սարե՛րդ՝ բարձրիկ ,

Դաշտե՛րդ անծայր ,

Ջրե՛րդ քաղցրիկ ,

Արև՛դ՝ պայծառ :

Դու տվել ես մեզ

Ծաղիկ ու ծիծաղ ,

Երգ , մանկապարտեզ ,

Թե՛ ուսում , թե՛ խաղ :

Դու տվել ես մեզ

Թռիչքի թևեր,

Որ բարձրանանք մենք

Աստղերից էլ վեր :

Զրույց բանաստեղծության բովանդակության շուրջ .

- Ինչի՞ մասին է բանաստեղծությունը :

- Ինչի՞ մասին է հեղինակը պատմում բանաստեղծության մեջ:
- Ի՞նչ է նշանակում Հայաստան բառը մեր բոլորի համար :
- Եկեք քարտեզի վրա ցույց տանք Հայաստանի Հանրապետության տարածքը :
- Ինչպե՞ս են անվանում մեր հանրապետությունը :
- Ուշադիր դիտեք քարտեզը և որոշեք, որ գույներն են գերիշխում Հայաստանի տարածքում :
- Ինչո՞վ է հարուստ մեր երկիրը :

Ֆիզկուլտդադար `

Երեխաները կանգնում են շրջանաձև և կատարում են բանաստեղծության բովանդակությանը համապատասխան շարժումներ :

Զրույց ՀՀ խորհրդանիշների մասին :

Դաստիարակ `

Երեխաներ , յուրաքանչյուր հանրապետություն ունի երեք տարբերակիչ , իրեն բնորոշ նշան ` դրոշը , զինանշանը և հիմներգը :

Երեխաներ , յուրաքանչյուր հանրապետություն ունի երեք տարբերակիչ , իրեն բնորոշ նշան՝ դրոշը , զինանշանը և հիմներգը : Եկեք երգենք կարմիր , կապույտ , ծիրանագույն երգը : Մեկնաբանենք դրոշի գույների նշանակությունը : Ցուցադրենք դրոշը , որը ավելի տեսանելի է դարձնում պարապմունքը :

Վերջում լսել « ՀՀ Օրհներգը » :

Դաստիարակ .

Հայաստանը մեր բոլորի ընդհանուր տունն է : Եվ ինչպես մեր ծնողներն են մեզ պաշտում , խնամում ու հոգ տանում մեր մասին , այնպես էլ մենք պետք է սիրենք ու փայփայենք մեր հարբենիքը :

- Երեխաներ եկեք բաժանվենք երեք խմբի, յուրաքանչյուր խումբ կունենա իր գույնը : Դա կլինի մեր դրոշի գույներից մեկը : Առաջին խումբ ՝ կարմիր , երկրորդը ՝ կապույտ , երրորդը ՝ ծիրանագույն :
- Կարմիր խումբը դրոշը կպատրաստի գունավոր թղթերով :
- Կապույտ խումբը կնկարի դրոշը մատիտներով :
- Ծիրանագույն խումբը դրոշը կծեփի ծեփամածիկով :

Երեխաներին տրվում է ժամանակ աշխատանքն ավարտին հասցնելու համար :

Ավարտելուց հետո աշխատանքները փակցնում են գրատախտակին , և թիմերը սկսում են քննարկել աշխատանքները :Պարապմունքի ավարտին հնչում է Շառլ Ազնավուրի ՝ « Քեզ համար Հայաստան » երգը , որի ընթացքում յուրաքանչյուրն իր նկարն է փաքցնում Հայաստանի Հանրապետության քարտեզի վրա , ու վերջում միաբերան բարձրաձայն ասում են « Հայաստանը մենք ենք » :


20.09.

17.03.23

Հայաստանի Հանրապետության քարտեզի վրա , ու վերջում միաբերան բարձրաձայն ասում են « Հայաստանը մենք ենք » :

Դաստիարակ .

- Ապրեք , իմ փոքրիկ հայրենասերներ , դուք շատ բան գիտեք մեր հայրենիքի մասին , ես համոզված եմ , որ երբ դուք մեծանաք , էլ ավելի կշենացնեք ու կհզորացնեք մեր երկիրը :

Դիտարկում

Պարապմունքի պլանավորումը համապատասղանում է տարիքային խմբի ծրագրին : Ընտրված անհրաժեշտ պարագաները , նկարները նույնպես համապատասղանեցված են պարապմունքին : Պարապմունքի տեսակը՝ զրույց: Դաստիարակի խոսքը հստակ է , մատչելի , գրական , ձայնային տեմբրը ՝ մեղմ: Պարապմունքը տարվել է ԽԻԿ համակարգով , պահպանվել է տևողությունը : Կիրառվել է մեթոդներ , հինարներ , հարցադրում,վերապատմում , խաղային մեթոդներ , ոտանավորի ուսուցում , նկարների միջոցով պատմում: Դաստիարակը կարողացավ հասնել պարապմունքի նպատակին ՝ըստ որի անհրաժեշտ է երեխաներին տալ գիտելիքներ հայրենիքի , հայկական բանակի ստեղծման մասին , դաստիարակել հպարտության զգացում , զարգացնել ստեղծագործական միտքը , կապակցված խոսքը , հարստացնել բառապաշարը, երեխաներին ծանոթացնել ՀՀ քարտեզին , դրոշին և զինանշանին :

Եվ , որ ամենակարևորն էր՝ պարապմունքի ավարտին երեխաները կարողացան պարապմունքի ընթացքում ստացած գիտելիքների շնորհիվ հյուսել կապակցված խոսք՝ փոքրիկ պատմություններ ներկայացնելով : Պարապմունքի ընթացքում երեխաները ունկնդրեցին հայրենասիրական բանաստեղծություն , երաժշտություն , երգեր և կիրառվեց ֆիզկուլտդադար : Երեխաները ոգևորված էին շատ ակտիվ , հայրենասիրական ոգով, տրամադրությամբ: Պարապմունքին ընդգրկված էին բոլոր երեխաները :

Պարապմունքի ավարտից հետո կարելի էր զբոսանք կազմակերպել և այցելել քաղաքի մոտակա զորամաս՝ բանակի առօրյային ծանոթանալու նպատակով :

Եզրակացություն

Պարապմունքի ընթացքում կատարվեց ուսումնասիրություն ՝ «Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը » թեմայով :

Ես կարծում եմ , որ հասել եմ իմ նպատակին ՝ երեխաների մեջ սերմանվել է հայրենասիրություն և գիտակցություն առ այն , թե ինչ է հայրենիքը , որ պետք է փայփայել և պայքարել նրա համար : Երեխաներն եկան այն գիտակցության , որ իրենցից յուրաքանչյուրը մի մասն է Հայաստանի և հենց իրենք են Հայաստանի վաղվա օրը:

Պարապմունքի ընթացքում բացահայտվեց երեխաների ոգում պատերազմի թողած հետքերը , հիշատակվեց մեր հերոսների անունները , նկարները . նրանց կատարած սխրագործությունները , որն ավելի ոգևորեց մատաղ սերնդին :

Օգտագործված գրականություն

- <<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդես :
- Bazarova O.B. <<Նախադպրոցականների բարոյական և հայրենասիրական դաստիարակություն>> :
- Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչ ՀՀ կառավարության 13 մայիսի 2021թ. N 744-Ն որոշում:
- 1. Aleshina N. V. <<Նախադպրոցականների հայրենասիրական դաստիարակություն>> , <<Նախադպրոցականների ծանոթացում շրջապատող աշխարհին և սոցիալական իրականություն>> :
- Ապարովա-Պիսկարևա Ն. <<Իմ տունը>>. Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյահայրենասիրական դաստիարակության ծրագիրը :
- Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագիր Երևան 2011թ.:

Դմիտրիևա Ե. Ա. <<Հայրենասիրական դաստիարակություն նախադպրոցական ուսումնական հաստատությունում >>: